

Արագածի լեռնագոգային բնակավայրերի զարգացումը՝ օրգանական գյուղատնտեսության և տուրիզմի կլաստերների զարգացման և նոր ու որակյալ ծառայությունների մատուցման միջոցով և ներդրումային ծրագրի գործողությունների պլանի համաձայն Ապարանի համայնքապետարանում փոխհամայնքապետ Հրայր Մկրտչյանի գլխավորությամբ կազմվեց աշխատանքային խումբ, մշակվեց գործողությունների պլան և ժամանակացույց:

Ներդրումային ծրագրի մասին գրությունը 27.04.2020թ. ստանալու պահից սկսվել են Արագածի և Վարդենուտի բնակավայրերում և դրանց հարակից տարածքներում անհրաժեշտ հողատարածքների տրամադրման ուսումնասիրությունները: Ուսումնասիրելով ծրագրում նշված բնակավայրերի աշխարհագրական դիրքը, հողերի նշանակությունները, նախնական պահանջվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների ծավալները՝ ցանկանում ենք նշել, որ համայնքն ունի ծրագրում նշված ծավալի տարածքներ, որոնք հնարավոր է հատկացնել ծրագրում նշված նպատակներն իրականացնելու համար:

Ստորև ներկայացնում եմ մինչև խոշորացումը Արագած, Վարդենուտ և Շենավան /Շենավանի վարչական տարածքն ունի պետական սեփականություն հանդիսացող տարածք, որը գտնվում է Վարդենուտի և Արագածի պետական սեփականություն հանդիսացող տարածքների մեջտեղում/ գյուղերի վարչական տարածքների պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի չափերը.

1. Արագածի վարչական տարածքում առկա է

- Պետական սեփականություն հանդիսացող տարածք՝ 3304 հա / որից 1313 հա այլ, 1985 հա արոտ, 5,4 հա խոտհարք/
- Համայնքային սեփականություն հանդիսացող տարածք՝ 1275 հա /արոտ/

2. Վարդենուտի վարչական տարածքում առկա է

- Պետական սեփականություն հանդիսացող տարածք՝ 1813 հա / որից 274 հա այլ, 1519 հա արոտ, 8,2 հա խոտհարք և 12 հա վարելահող/
- Համայնքային սեփականություն հանդիսացող տարածք՝ 1169 հա, 19,7 հա /այլ/

3. Շենավանի վարչական տարածքում առկա է

- Պետական սեփականություն հանդիսացող տարածք՝ 1102 հա, /որից 285 հա այլ, 733 հա արոտ, 63 հա խոտհարք /
- Համայնքային սեփականություն հանդիսացող տարածք՝ 64 հա /այլ/

Գիտակցելով նման բացառիկ հնարավորությունը և աննախադեպ մեծ ծավալների ներդրումային ծրագրի օգտակարությունը՝ աշխատանքային խումբը իր առջև դրեց ամենակարևոր խնդիրներից մեկը՝ այն է Ապարանի համայնքապետարանի և բնակիչների կողմից ներդրումային ծրագրի նկատմամբ ձևավորել ողջունելի և դրական վերաբերմունք, միաժամանակ արձանագրել և ներդրողներին ներկայացնել

բնակիչների շրջանում բարձրացված հարցերը, առաջարկությունները և առաջացած մտահոգությունները:

Ներդրումային ծրագրի հայեցակարգի մասին տեղեկությունը գրեթե բոլոր թիրախային բնակավայրերի բնակիչներին հասցնելու և ճշգրիտ տեղեկատվությունը մանրամասն տարածելու համար կազմակերպվել են հանդիպումներ բնակչության տարբեր հատվածների հետ, ինչպիսիք են ավագ սերնդի շահագրգիռ բնակիչներ, ակտիվ դերակատարներ, կանանց խմբեր, պատանի-երիտասարդներ, ուսուցիչներ, ֆերմերներ և այլ ներկայացուցիչներ: Հանդիպումների ընթացքում մասնակիցների առաջարկությամբ տեղում ստեղծվել են աշխատանքային խմբի գործընկերներ՝ թիմի անդամներ, որոնք իրենց հերթին կտարածեն այն տեղեկությունը, որը կտրամադրվի աշխատանքային խմբի կողմից:

Հաշվի առնելով նաև համայնքում մինչև այսօր ներդրումային այլ ծրագրերի իրականացման գործընթացները և այն հնարավոր խոչընդոտները, խնդիրներն ու հաճախակի տարածվող ապատեղեկատվությունները, աշխատանքային խումբը մանրակրկիտ օրինակներով անդրադարձել է նմանատիպ դեպքերին, որոնք խանգարել են մասնավոր, բնակիչ և պետություն համագործակցությանը և դրական փոխհարաբերությունների ստեղծմանը՝ հասցնելով մեծ վնաս թե՛ ներդրումային ծրագրին, թե՛ համայնքի բնակիչներին և թե՛ ամբողջ պետությանը:

Ներդրողի կողմից ներկայացված ներդրումային ծրագրի կոնցեպտուալ տարբերակի քննարկումը նախ կազմակերպվել է աշխատանքային խմբի ներսում, ապա ժամանակացույցի համաձայն սկսվել է ծրագրի նախնական քննարկում ավագանու և թիրախային բնակավայրերի բնակչության հետ:

Հաշվի առնելով նոր կորոնավիրուսով պայմանավորված ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությունն ու համապատասխան սահմանափակումները, որոշվեց բնակչության հետ հանդիպումները կազմակերպել հնարավորության դեպքում բացօթյա, իսկ հանդիպումների մասնակիցները թիվը՝ 10-15 հոգի:

29.04.2020-08.05.2020 թթ.

Կազմակերպվեցին հանդիպումներ Արագածի հարակից բնակավայրերի բնակիչների հետ: Հանդիպումներ եղան երիտասարդների, կանանց, տարեցների հետ առանձին խմբերով, որի ժամանակ ներկայացվեց ներդրումային ծրագրի բովանդակությունը, նպատակը, որի շուրջ ակտիվ քննարկումներ եղան, հնչեցին բազմաթիվ հարցեր, կարծիքներ և առաջարկներ:

Հարցերի մի մասի պատասխանները տրվել են հենց տեղում /նշված է +/, իսկ մյուս հարցերը ճշգրտման կարիք ունեն:

Քննարկումների ընթացքում բնակչության կողմից հնչեցին հիմնականում հետևյալ հարցերը.

1. Ովքե՞ր են ներդրողները և ինչո՞ւ են ընտրել հենց այս տարածքը+
2. Կոնկրետ ո՞ր տարածքի վրա են նախատեսվում աշխատանքները իրականացնել: Կա՞ աշխատանքի տարածքի քարտեզը
3. Պետական և համայնքապատկան հողերը վարձակալակա՞ն, թե՞

4. Հողերը վարձակալելու կամ գնելու դեպքում տարիներով աշխատանքը չսկսելու դեպքում հողը պարապ կմնա, գյուղացիների դժգոհությունը կբարձրանա:
5. Արոտները ներառվելու են ծրագրով նախատեսված տարածքում:
6. Երբվանի ց են նախատեսվում սկսել բուն աշխատանքները+
7. Մասնավոր սեկտորի, տեղի բնակչության հետ համագործակցելու են:
8. Ֆերմերային տնտեսությունը, օրգանական գյուղատնտեսության զարգացման մեջ ի նչ դեր ունեն գյուղացիները:
9. Այս ծրագրերի իրականացումը արդյո՞ք չի վնասի գյուղացիների անասնապահությանը և հողագործությանը:
10. Տարվա ո՞ր եղանակներին են աշխատելու +
11. Ջրամբարը կձառայեցնե՞ն ոռոգման համար:
12. Հնարավո՞ր է, որ ենթակառուցվածքները լինեն հարակից գյուղերում:
13. Հնարավո՞ն է մասնավոր հողերի գնում:
14. Ջրամբարի ծավալը ինչքա՞ն կլինի:
15. Լեռնագոգի բնական աղբյուրները չե՞ն վնասվի:
16. Զբոսաշրջիկներ մեծ հոսքի դեպքում շրջակա միջավայրի պաշտպանության միջոցներ կձեռնարկվե՞ն:
17. Ծրագրի իրականացման ընթացքում կլինե՞ն հանդիպումներ համայնքի բնակիչների հետ:
18. Աշխատատեղեր ժամանակավոր են, թե՞ մշտական

Աշխատանքային խմբի և բնակիչների նախաձեռնությամբ սույն ծրագրի մասին ավելի լայն տարածում ապահովվելու նպատակով, կստեղծվի ինտերնետային հարթակ՝ հավանաբար ֆեյսբուքյան էջ, որտեղ հնարավոր կլինի իրականացնել առցանց հանրային լսումներ, տեղի կունենան ընթացքում առաջ եկած հարցերի քննարկումներ, առաջարկություններ և այլն: Էջին միանալու պատրաստակամություն են հայտնել թիրախային բնակավայրերի շահագրգիռ անձինք, երիտասարդները և այն բնակիչները, որվքեր ինտերնետի հնարավորություն կունենան:

Ամփոփելով թիրախային տարածքներում ավելի քան 200 բնակիչների հետ կատարված հանդիպում-քննարկումների արդյունքները, կարող ենք արձանագրել, որ բնակչությունը ողջունում է ներդրումային ծրագիրը, տրամադրվածությունը դրական է և պատրաստակամ են համագործակցության տարբեր ձևաչափերին:

Իրազեկման աշխատանքները շարունակվում են և Ապարան համայնքն իր բնակիչների հետ միասին անելու է առավելագույնը ծրագրի իրականացմանը օժանդակելու համար:

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ:

Հ. ՄԿՐՏՅԱՆ

15.05.2020թ.